

ՈւՂԵՑՈՒՅՑ

Գրավատնային գործունեություն է համարվում ֆիզիկական անձանց անձնական օգտագործման շարժական գույքի և այլ իրերի գրավով ապահովված կարճաժամկետ վարկերի տրամադրումը և պահատվությունը:

Հայաստանի Հանրապետություն գրավատնային գործունեություն կարող են իրականացնել Հայաստանի Հանրապետությունում գրանցված իրավաբանական անձինք և անհատ ձեռնարկատերերը ՀՀ Կենտրոնական բանկի կողմից տրված լիցենզիայի հիման վրա:

Լիցենզիայի ստացման, ինչպես նաև գրավատնային գործունեության իրականացման այլ ընթացակարգերը կարգավորված են **«Գրավատների և գրավատնային գործունեության մասին» ՀՀ օրենքով** և ՀՀ Կենտրոնական բանկի խորհրդի կողմից հաստատված **«Հայաստանի Հանրապետությունում գրավատնային գործունեության լիցենզավորման»** կարգով:

Գրավատնային գործունեություն իրականացնելու համար անհրաժեշտ է

- (I) Գրանցվել իրավաբանական անձանց պետական ռեգիստրում որպես իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր
- (II) Ձեռք բերել կամ ունենալ սեփականության, վարձակալության կամ անհատույց օգտագործման իրավունքով պատկանող տարածք, որը պետք է բավարարի [«Հայաստանի Հանրապետությունում գրավատնային գործունեության լիցենզավորման» կարգի 2-րդ գլխով սահմանված](#) պահանջներին
- (III) Պատշաճ կերպով պատրաստել [«Հայաստանի Հանրապետությունում գրավատնային գործունեության լիցենզավորման» կարգի 2-րդ գլխով սահմանված](#) փաստաթղթերի փաթեթը.
- (IV) Փաթեթը առձեռն կամ էլեկտրոնային եղանակով (secretariat@cba.am) ներկայացնել ՀՀ կենտրոնական բանկ

Փաստաթղթերը ամբողջական և արժանահավատ ներկայացնելուց, ինչպես նաև սահմանված այլ պահանջներին բավարարելուց հետո Կենտրոնական բանկի խորհուրդը 30-օրյա ժամկետում որոշում է կայացնում լիցենզիան փորձադրելու կամ ներկայացված դիմումը մերժելու վերաբերյալ: Կենտրոնական բանկի խորհուրդը մերժում է գրավատնային գործունեության վերաբերյալ լիցենզիայի ստացման դիմումը [«Գրավատների և գրավատնային գործունեության մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի](#) սահմանված հիմքերով:

- (V) Լիցենզիայի տրամադրման որոշման պահից 30-օրյա ժամկետում՝ գրավատունը [«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի](#) համաձայն պետք է կատարի 2 միլիոն ՀՀ դրամի չափով տուրքի վճարում: Թույլտվությունը ստանալուց հետո, մինչև հերթական տարվա ժամկետի լրանալը, գործունեության իրականացման համար կատարվում է նույն չափով տուրքի վճարում, ինչպես նաև [ՀՀ «Հարկային օրենսգրքով»](#) սահմանված կարգով, չափերով և ժամկետներում հարկեր:

***ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ:** Հերկյալ նյութը համարվում է [«Գրավատների և գրավատնային գործունեության մասին» ՀՀ օրենքի](#) և ՀՀ ԿԲ խորհրդի կողմից [«Հայաստանի Հանրապետությունում գրավատնային գործունեության լիցենզավորման» կարգի սահմանված պահանջներին համառոտ նկարագրություն, ուստի առավել մանրամասն տեղեկություններին ծանոթանալու համար անհրաժեշտ է ուսումնասիրել վերը նշված օրենքը և կարգն ամբողջությամբ:](#)